


ՍԱՔՍԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ ԴԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ

ԿԱՐԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Արտաքին տնտեսական գործունեությունը և, առաջին հերթին, արտաքին առևտուրը կապված են երկրի մաքսային սահմանով ապրանքների ու տրանսպորտային միջոցների ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց կողմից տեղափոխման հետ: Ընդ որում՝ ապրանքներն ու տրանսպորտային միջոցները ենթակա են մաքսային հսկողության և ձևակերպման:

ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի *ժզ* կետի համաձայն՝ մաքսային հսկողություն է համարվում Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթների պահպանման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգը¹: Այդ համակարգում մաքսային վերահսկողությունը տարանջատվում է հետևյալ երեք տարրերի՝ օբյեկտի, սուբյեկտի և առարկայի²:



Մաքսային վերահսկողության սուբյեկտներ են հանդիսանում մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության մաքսատները և մաքսային կետերը, իսկ մյուս կողմից՝ հայտարարատուները կամ նրանց կողմից լիազորված անձինք (մաքսային միջնորդները), որոնց իրավունքները և պարտականությունները սահմանված են ՀՀ մաքսային օրենսգրքի 69-րդ և 132-րդ հոդվածներով³:

¹ Տե՛ս Հարկեր, տուրքեր և վճարներ, ամփոփ ժողովածու, երկրորդ մաս, Եր., 2011:

² Տե՛ս Андриашин Х.А., Свиных В.Г., Таможенное право, 2006:

³ Տե՛ս Հարկեր, տուրքեր և վճարներ, նշվ. հրատ.:

Մաքսային վերահսկողության օրյեկտը բնորոշվում է⁴ տարբեր մոտեցումներով. մի կողմից՝ դրամական ֆոնդերի կուտակման ընթացքում դրամական միջոցների շարժն է, արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների նյութական, աշխատանքային և այլ ռեսուրսները, մյուս կողմից՝ մաքսային հարաբերությունները, մաքսային ստուգումների ընթացքում ստուգվող անձի վարքը և այլն:

Մաքսային վերահսկողության առարկան յուրաքանչյուր որոշակի դեպքում կարող է հանդես գալ մաքսային հարաբերությունների դրսևորման տարբեր տեսանկյուններից՝ օրինականությամբ, արժանահավատությամբ, լրիվությամբ, հիմնավորվածությամբ և այլն:

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքներ և տրանսպորտային միջոցներ տեղափոխող կամ այնպիսի գործունեություն ծավալող անձինք, որոնց նկատմամբ մաքսային մարմիններն իրականացնում են վերահսկողություն, վերջիններիս ներկայացնում են անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ: Ընդ որում՝ այդ փաստաթղթերը և տեղեկությունները, ինչպես նաև ապրանքները և տրանսպորտային միջոցները մաքսային մարմինների կողմից մաքսային հայտարարագիրն ընդունելուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնում են մաքսային հսկողության: Սահմանված ժամկետում մաքսային մարմիններին ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ մաքսային հայտարարագիր չներկայացնելը, ինչպես նաև մաքսային հսկողություն իրականացնելու նպատակով համապատասխան փաստաթղթեր չներկայացնելը (անկախ գրավոր հայտարարագիր ներկայացնելուց) պատճառ է դառնում տուգանքի՝ 50.000 դրամի չափով:

Մաքսային կանոնների խախտումները և առկա խնդիրները

Ներկայումս, ՀՀ մաքսային օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, այն ապրանքներն ու տրանսպորտային միջոցները, որոնց մաքսային ձևակերպումն ավարտված չէ, կարող են մեկ մաքսային մարմնից մյուսը տեղափոխվել ապրանքներ տեղափոխող անձի կամ դրանց փոխադրումն իրականացնող անձի պատասխանատվության ներքո: Ընդ որում՝ ապրանքներն ու տրանսպորտային միջոցները մեկ մաքսային մարմնից մյուսը տեղափոխելու դեպքում կազմվում է փոխադրման ամփոփագիր: Ուստի, եթե տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքները փոխադրման ամփոփագրով մեկ մաքսային մարմնից մյուսը տեղափոխելու դեպքում 10-օրյա ժամկետում որևէ այլ մաքսային ռեժիմով չեն հայտարարագրվում, ապա մաքսային մարմինների կողմից արձանագրվում են ՀՀ մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածով նախատեսված մաքսային

⁴ Стен Ноздрачев А.Ф., Таможенное право, 2007:

կանոնների խախտումներ⁵: Այդ խախտումների հետևանքով տնտեսավարող սուբյեկտները ենթարկվում են վարչական պատասխանատվության և տուգանվում 50.000 դրամ գումարի չափով: Սակայն իրականում ո՞վ է վճարում այդ գումարը: Պարզ է՝ տնտեսավարող սուբյեկտները, իսկ հետագայում այդ չափով ավելանում է վաճառվող արտադրանքի ինքնարժեքը: Ստացվում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածով ամրագրված մաքսային կանոնների խախտումների դեպքում սահմանված տուգանքի գումարները մույնպես վճարում են քաղաքացիները: Այսպես օրինակ՝ 2009 թվականին, 2008 թվականի համեմատությամբ, ապրանքների գներն աճել են 3.4, իսկ 2010 թվականին՝ 8.2 տոկոսով⁶: Կարելի է ենթադրել, որ ապրանքի գների աճը պայմանավորված չէ միայն միջազգային շուկայում գների բարձրացմամբ, դա հետևանք է նաև տնտեսավարող սուբյեկտների՝ մաքսային կանոնների խախտումների դեպքում տուգանքների վճարման:

ՀՀ մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածով ամրագրված մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ ցուցանիշները ներկայացվում են աղյուսակի միջոցով.

Աղյուսակ⁷

Խախտման առարկա	2009 թ.		2010 թ.		2011 թ. հունվար-ապրիլ	
1	2		3		4	
ՀՀ մաքսային օրենսգրքի 194-յւ հոդված	խախտումների թիվը	գումարը (հազ.դր.)	խախտումների թիվը	գումարը (հազ.դր.)	խախտումների թիվը	գումարը (հազ.դր.)
	1224	61,200.0	1272	63,600.0	348	17,400.0

2009 թվականին նշված հոդվածով ամրագրված մաքսային կանոնների խախտումների թիվը կազմել է 1224, իսկ 2010 թվականին աճել է՝ հասնելով 1272-ի: Տնտեսավարող սուբյեկտները, համաձայն չլինելով մաքսային ծառայողների գործողություններին, հրաժարվում են վճարել նախատեսված տուգանքը: Օրինակ՝ 2009 թվականի ընթացքում մաքսային մարմինների կողմից ներկայացված մաքսային վճարների և վարչական տուգանքների բռնագանձման 183 հայցից բավարարվել են 160-ը, իսկ 2010 թվականին 230-ից՝ 80-ը:

Որո՞նք են մաքսային կանոնների խախտումների աճման իրական պատճառները, ինչո՞վ են դրանք պայմանավորված:

⁵ Տե՛ս www.Customs.am (Մաքսային իրավախախտումներ և հրամաններ բաժին):

⁶ Տե՛ս 2010 և 2011 թվականների ՀՀ վիճակագրական տարեգրքեր:

⁷ www.Customs.am (Մաքսային իրավախախտումներ և հրամաններ բաժին):

Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

ՀՀ մաքսային օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային միջնորդը (բրոքերը) իրավունք ունի իրականացնելու մաքսային ձևակերպման պահանջներից բխող բոլոր գործողությունները, ինչպես նաև այլ միջնորդական գործառնություններ, որոնք վերաբերում են մաքսային գործին՝ իր կողմից ներկայացվող անձի հանձնարարականով և վերջինիս միջոցների հաշվին: Միևնույն ժամանակ, նույն հոդվածով սահմանվում են նաև մաքսային միջնորդի պարտականությունները: Դրանք են՝

1) իր կողմից իրականացված միջնորդական գործառնությունների հաշվառում և կատարված մաքսային ձևակերպումների վերաբերյալ մաքսային մարմիններին հաշվետվություն,

2) ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրում,

3) մաքսային մարմնի պաշտոնատար անձի պահանջով հայտարարագրվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների ներկայացում,

4) մաքսային մարմնի պահանջով մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի և այլ տեղեկությունների ներկայացում,

5) մաքսային մարմնի պահանջով ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային զննմանը ներկայության ապահովում,

6) իրավաբանական հասցեի, գտնվելու և (կամ) գործունեության վայրերի, տնօրենի, մաքսային ձևակերպումների մասնագետների փոփոխության դեպքում դրանց վերաբերյալ 15-օրյա ժամկետում վերադաս մաքսային մարմնին տեղեկատվության տրամադրում,

7) իր կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանված սակագների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովում:

Մաքսային միջնորդների պարտականությունները սահմանափակվում են միայն միջնորդական գործառնությունների հաշվառման, ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրման, մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի, տեղեկությունների ներկայացման և այլ գործառնությամբ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ մաքսային միջնորդը, լինելով «մաքսային մարմին - մաքսային վճարումներ կատարող» երկկողմ հարաբերությունների մոր՝ երրորդ մասնակից, էական դեր է խաղում տնտեսավարող սուբյեկտների մաքսային վճարների գծով պարտավորությունների որոշման և դրանց կատարմանն օժանդակության գործում⁸:

Տնտեսավարող սուբյեկտի տեսանկյունից մաքսային միջնորդներն իրենց հաճախորդներին մատուցում են կարևորագույն ծառայություն, տեղյակ են հաճախակի փոփոխվող օրենսդրության դրույթներին, տրամադրում են վերջին փոփոխություններով հագեցած տեղեկատվություն և դրան համահունչ խորհրդատվություն, ներկայացնում են հաճախորդի

⁸ Ст'ю Таможня за рубежом (том III), справочники полпред. Совет ветеранов МИД РФ. М., 2008:

շահերը մաքսային մարմիններում, օգնում են տնտեսավարող սուբյեկտներին՝ խուսափելու սխալներից, օժանդակում են արդյունավետ մաքսային վճարների պլանավորման խնդիրը լուծելիս, նվազեցնում (բացառում) տնտեսավարող սուբյեկտի շփումը մաքսային մարմնի հետ, որը նպաստում է կաշառակերության (կոռուպցիա) նվազեցմանը, աջակցում են մաքսային մարմիններին՝ իրենց կողմից սպասարկվող տնտեսավարող սուբյեկտների հետ ակտիվ հետադարձ կապի հարցում:

Պետության տեսանկյունից՝ մաքսային մարմինը գործ է ունենում ոչ թե բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտների, այլ մասնագիտական որակավորում ունեցող միջնորդների հետ: Դա նպաստում է մաքսային վարչարարական ծախսերի տնտեսմանը: Մաքսային մարմինները տնտեսավարող սուբյեկտներից ստանում են տեղեկատվություն հետադարձ կապի միջոցով, հնարավորություն են ունենում իրականացնելու առավել արդյունքային ստուգումներ քանակի կրճատման միջոցով: Մաքսային միջնորդների օգնությամբ մշակվում է ռիսկերի կառավարման արդյունավետ մեխանիզմ:

Գործնականում մաքսային միջնորդները ներկայացնում են մաքսային պլանավորման առաջարկի, իսկ տնտեսավարող սուբյեկտները՝ պահանջարկի կողմը: Ռիսկերի կառավարումը, պահանջարկի առումով, մաքսային մարմինների համար կարևոր գործիք է համարվում: Դա հնարավորություն է տալիս գնահատելու տնտեսավարող սուբյեկտների որոշակի խմբի կողմից «ձևավորված» ռիսկը և, կենտրոնացնելով ռեսուրսները, ճիշտ կառավարել դրանք:

Մաքսային միջնորդները, լինելով նաև մաքսային ռիսկի կրողներ, պետք է առաջնորդվեն հետևյալ հիմնական սկզբունքներով.

1. Հաճախորդի և օրենքի հանդեպ մասնագիտական պատասխանատվություն. արտահայտվում է տարբեր ձևերով, սակայն հիմնականը մաքսային միջնորդների նվիրվածությունն է իրենց հաճախորդներին և վերջիններիս շահերի ներկայացումը՝ տրամադրելով լավագույն խորհրդատվություն: Շատ երկրներում մաքսային խորհրդատուները որևէ ուղղակի պարտավորություն չունեն մաքսային մարմինների նկատմամբ, պատասխանատվություն են կրում միայն օրենքի առաջ:

2. Անձնական բնույթի պատասխանատվություն, մաքսային միջնորդների աշխատանքի կանոնակարգում. մի շարք երկրներում մաքսային խորհրդատուները ինքնակարգավորվող սուբյեկտներ են, իսկ որոշ երկրներում մաքսային մարմինները ակտիվ դերակատարում ունեն մաքսային միջնորդների գործունեության մեխանիզմների ապահովման առումով (օրինակ՝ մաքսային միջնորդների գործունեության լիցենզավորում և այլն):

3. Ֆինանսական և հեղինակային ռիսկ: Սա կարևոր գործոն է խոշոր ընկերությունների համար, որոնք ստեղծում են ռիսկերի կառավարման գործուն համակարգ:

4. Վարձատրություն. կատարվում է մատուցվող ծառայությունների դիմաց՝ ժամավճարի կամ հաստատում վճարի ձևով: Մի շարք երկրներում վարձատրության այս համակարգի փոխարեն ներդրվեց «արդյունքի վրա

հիմնված» վարձատրության մեխանիզմը: Սակայն ԱՄՆ-ում վարձատրության այս համակարգն արգելվեց:

5. Իրավական բնույթի հարցեր. մաքսային միջնորդ - տնտեսավարող սուբյեկտ հարաբերություններում կարևորվում է տեղեկատվության գաղտնիության ապահովումը:

6. Ստուգման ընթացքում առաջացող հարցեր. հաճախորդներին կարող են խորհրդատվություն տրամադրել ստուգման առանձնակի դեպքերի համար: Դա կարող է ներառել նաև մաքսային վճարների պլանավորման արտացոլման հարցերի վերաբերյալ խորհրդատվությունը:

Հաշվի առնելով մաքսային միջնորդների ինստիտուտի միջազգային փորձը, մեր երկրի ներկայիս տնտեսական հարաբերությունները՝ առաջարկվում են ՀՀ մաքսային միջնորդների գործունեության հետևյալ հիմնական ուղղությունները.

Վարչարարական-կազմակերպական իմաստով նպատակահարմար է մաքսային միջնորդների և մաքսային մարմնի տարածքային ստորաբաժանումների միջև ստորագրել համագործակցության հուշագիր, որը կկանոնակարգի միջնորդների կողմից տնտեսավարող սուբյեկտներին մատուցվող ծառայությունների և մաքսային մարմնի հետ համագործակցային հարաբերությունները: Անհրաժեշտ է ստեղծել եռակողմ ակտիվ համագործակցության և հետադարձ կապի մեխանիզմ: Այդ դեպքում մաքսային մարմինը կկարողանա ճշտել մաքսային միջնորդների շրջանակը՝ հնարավորություն ունենալով մշակելու համապատասխան քաղաքականություն մաքսային միջնորդների առնչությամբ: Միաժամանակ, նախատեսվող հուշագիրը կսահմանի էթիկայի կանոններ՝ դառնալով որակի վերահսկողության որոշակի մեխանիզմ, նաև միջոց՝ ուղղված ագրեսիվ մաքսային վճարների պլանավորման դեմ:

Մաքսային միջնորդների համար նախատեսել վարկանիշային համակարգ, որը պայմանավորված կլինի տվյալ կազմակերպությունում որակավորում ունեցող աշխատողների թվով, սպասարկվող հաճախորդների քանակով, դատական գործընթացներում ներգրավվածության աստիճանով և այլն: Վարկանիշային ցուցակում առաջնային տեղերում գտնվող կազմակերպությունները կմասնակցեն մաքսային մարմնի կազմակերպած ֆորումին, որտեղ կքննարկվեն առավել խնդրահարույց հարցերը և կապահովվի հետադարձ կապ պրոֆեսիոնալ կազմակերպությունների հետ: Ֆորումը կընդգրկի ինչպես մասնագիտացված կազմակերպությունների ներկայացուցիչների (մաքսային միջնորդներ), այնպես էլ ոչ միջնորդ մասնագետների: Ամիսը մեկ անգամ մաքսային մարմինը մասնագետներին կներկայացնի և կքննարկի ոլորտին վերաբերող կարևորագույն հարցեր՝ ստեղծելով հետադարձ կապի հնարավորություն:

Իրավական դաշտի կարգավորման առումով նախևառաջ կարևորվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից էլեկտրոնային հաշվետվությունների կազմման և մաքսային մարմիններին ներկայացման հնարավորության ստեղծումը:

Առաջարկվում է վերանայել մաքսային միջնորդների պարտականությունները, մշակել արդյունքների վրա հիմնված վարձատրության համակարգ: Վերջինս կնպաստի մաքսային կանոնների խախտումների և կոռուպցիայի նվազեցմանը:

Առաջարկությունների կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Մաքսային միջնորդների ինստիտուտի կատարելագործման և գործողության արդյունքում կնվազի մաքսային կանոնների խախտումների, դատական կարգով բողոքարկումների թիվը, ներմուծվող ապրանքների գների փոփոխությունը կպայմանավորվի միջազգային շուկաներում գների փոփոխությամբ միայն, տնտեսավարող սուբյեկտներին մաքսային մարմիններում հնարավորություն կընձեռնվի նաև ինքնուրույն հայտարարագրելու ՀՀ տարածք ներմուծվող կամ արտահանվող ապրանքները և տրանսպորտային միջոցները, կբարձրանան մաքսային միջնորդների որակավորման, պատասխանատվության մակարդակները, մաքսային միջնորդները և տնտեսավարող սուբյեկտները մշտապես տեղյակ կլինեն հաճախակի փոփոխվող օրենսդրության դրույթներին:

Մաքսային մարմինները գործ կունենան մասնագիտական բարձր որակավորում ունեցող միջնորդների հետ, մաքսային համակարգում կնվազեն վարչարարական ծախսերը, մաքսային մարմինների կողմից կկատարվեն առավել արդյունքային ստուգումներ քանակի կրճատման միջոցով, կգործեն ռիսկերի կառավարման առավել արդյունավետ մեխանիզմներ:

КАРЕН ГАСПАРЯН – Роль таможенных посредников в системе контроля.- В данной работе рассматривается роль таможенных посредников в системе таможенного контроля, понятие и роль таможенного контроля, нарушение таможенных правил в настоящее время и проблемы в этой области. Предлагаются пути решения настоящих проблем и рассматриваются предполагаемые результаты.

KAREN GASPARYAN – The role of customs brokers in the system of control.- The role of customs brokers in customs control, the concept and importance of customs, the present situation and current problems of customs breaches have been investigated in the given study.

Certain proposals have been presented for the solution of the current problems and the possible expected results.